Digitally signed by
MOVSISYAN NVARD 6109570273
Date: 08.05.2026 13:11:02

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
27.04.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐ» ՄԱՐԶԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐ» ՄԱՐԶԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02513397
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Ագաթանգեղոսի փող. թիվ 13
1.4 Պետական գրանցման համարը		211.171.00604
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1994-06-09
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+374041001607
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.achxatanqayinrezervner.am
1.8 Էլեկտրոնային փոստը		nvard.movsisyan.57@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԱՐԱ	ՄԵՀՐԱԲՅԱՆ	նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Ընդլայնել կազմակերպության մարզական ու ուսումնական կապերը այլ երկրների կազմակերպությունների մարզիկների և մարզիչների հետ:		
Աջակցել ՀՀ-ում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը:		
Աջակցել առողջ ապրելակերպի ձևավորմանը, ազգաբնակչության առողջության ամրապնդմանը,ֆիզկուլտուրայի մարզական տարբեր ծրագրերի միջոցով իրականացնել ֆիզիկական և բարոյական դաստիրակություն:		
Կազմակերպել ֆիզկուլտուրային-մարզական շարժման լայն պրոպագանդա,նպաստել սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:		
Կազմակերպել ֆիզկուլտուրային-մարզական շարժման լայն պրոպագանդա,նպաստել սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:		
Անցկացնել ֆիզիկական պատրաստականության և մարզական զանգվածային աշխատանքի ստուգատես-մրցույթներ,կազմակերպել մարզական տոներ,փառատոններ,մրցաշարեր և այլ միջոցառումներ:		
Իրականացնել հանրակրթական դպրոցների սովորողների,աշխատողների ու նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական կոփման,նրանց ուսման,աշխատանքի և հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստելու,համազգային ծրագրեր:		
Իրականացնել մարզաձևերի զարգացմանը,մարզական հերթափոխի պատրաստման,Աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների և օլիմպիական խաղերի,ՀՀ ազգային հավաքական թիմերը բարձրակարգ մարզիկներով համալրելու պետական պապվերներ:		
Օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակում է ֆիզիկական կուլտուրայի,սպորտի,տուրիզմի և կազմակերպության գործունեության այլ ուղղություններին վերաբերող ուսումնամեթոդական ձեռնարկներ,ուսումնական ծրագրեր և ֆիզիկական վարժությունների համալիր առաջադրանքներ,որոնց կատարման արդյունքներով բացահայտում են կրթության համակարգում սովորողների և աշխատողների ֆիզիկական պատրաստականության մակարդակն ու առողջական վիճակը:		
Հաստատել կազմակերպության կողմից կազմակերպված մրցումների կանոնադրությունները և հսկել դրանց իրագործումը:		
Աջակցել ուսումնական հաստատություններին հանրապետական առաջնություններին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցությունը:		
Շահագրգիռ նախարարությունների,գերատեսչությունների,Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի,մարզական կազմակերպությունների հետ մշակել և հաստատել ֆիզկուլտուրային մարզական չափորոշիչներ:		
ՀՀ պետական կառավարման մարմինների հետ կազմել և հաստատել նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիրակության պետական ծրագրերը:		
ՀՀ տարածքում կազմակերպել և անցկացնել հանրապետական և միջազգային մրցումներ՝հավաքական և ակումբային թիմերի մակարդակով:		
Ներկայացնել կազմակերպության շահերը միջազգային մարզական կազմակերպություններում և մասնակցել այլ կազմակերպությունների աշխատանքներին:		
Մարզիկներին,մարզիչներին և այլ մասնագետներին սահմանված կարգով ներկայացնել համապատասխան նախարարությանը՝խրախուսման և պատվո կոչումների շնորհման:		
Մշակել և հաստատել կազմակերպության հավաքական թիմերի նախապատրաստման ընթացիկ և հեռանկարային պլանները:		

4 Հասարակական կազմակերպության՝	
4.1 Անդամների թիվը	88
4.2 Կամավորների թիվը	25
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	2

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1				

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
2	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Տավուշի մարզ ք.Իջևանում	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
3	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Գավառ	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
4	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Կոտայքի մարզ ք.Բյուրեղավան	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
5	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Վայոց Ձոր ք. Եղեգնաձոր	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
6	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
7	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
8	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
9	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
10	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումներ	ՀՀ Արարատի մարզ ք. Արտաշատ	Ավարտված	1-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
11	ՀՀ<<դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>մրցումների եզրափակիչ	ՀՀ Վանաձոր քաղաք	Ավարտված	4-6րդ դասարանի աշակերտների ֆիզիկական կարողությունների մոնիտորինգ	առողջ ապրելակերպի արմատավորում
12	ՀՀ Դպրոցականների լողափնյա մարզաձևերի (հանդբոլ ֆուտբոլ,վոլեյբոլ)հանրապետական մարզական խաղերի	ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Սևան	Ավարտված	Դպրոցականների առողջ ապրելակերպ 16-17 տարեկան պատանիների խթամում	չափորոշիչների ստուգատես
13	ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների <<Հուսո մեկնարկներ>>	ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Գավառ	Ավարտված	Դպրոցականների առողջ ապրելակերպ 13-15 տարեկան պատանիների խթամում	չափորոշիչների ստուգատես
14	ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների ամառային հանրապետական մարզական խաղեր	ՀՀ Տավուշի մարզ ք.Դիլիջան	Ավարտված	Դպրոցականների առողջ ապրելակերպ 12-16 տարեկան պատանիների խթամում	չափորոշիչների ստուգատես

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	230,056,600
8.2 Գույքը	

Ընդամենը		230,056,600	
9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ			
Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները	
1	230,056,600	ԿԳՍՄ նախարարություն	
Հ/Հ	9.2 Գույքը		
1			
Ընդամենը	230,056,600		
10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝			
10.1 Դրամական միջոցները		230,056,600	
10.2 Գույքը			
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		230,056,600	
11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝			
11.1 Դրամական միջոցները		230,056,600	
11.2 Գույքը			
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		230,056,600	
12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝			
Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը			
Նշումներ			
Աշխատավարձ՝143 675,0 հազ.դրամ,կոմունալ՝ 15 164,7 հազ.դրամ,միջոցառում՝ 57 903,5 հազ.դրամ,այլ ծախսեր՝13 313,4հազ.դրամ:			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

GM CONSULT LLC

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 28.04.2026թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Արփինե Խաչատրյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.05.2026 13:07